

արժուի - 920-8-1



ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

◆ Խմբագիր ◆
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

◆ Տէր ԷԼՏՈՐԷՆ ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 8

1 ԱՊՐԻԼ 1920



Շնորհագեղ փոքրիկն ՇԱՔԷ

որուն հայր՝ Գարեգին Թերզեան՝
պատերազմին սկիզբները կախաղան
հանուեցաւ գաւառի մէջ բուրժերու
կողմէ:

ՅԱԿՈԲ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

ԹԵՐԹԵՐՈՒ ԳՈ. ՄԱԿԱԼ

Պատկ. Ալի Բէշիտ էֆ. Իան

ԳԻՆ 100 ՓՐ.

ԹԻԻ 14

◆
 . 0 .
 . 0 .
 . 0 .
 . . . 0 . . .
 . . . 0 . . .
 . . . 0 . . .
 . . 0 . .
 . 0 .
 . 0 .
 . 0 .
 . 0 .
 . . 0 . .
 . . . 0 . . .

1. Ընտանի կենդանի մը :
2. Ածական մը :
3. Ծառին մէկ մասը :
4. Հանդստեան առարկայ մը :
5. Հայ թագաւոր մը :
6. Թիւ մը :
7. Վիճակ պարզով ածական մը :
8. Ածական մը :
9. Պտուղ մը :
10. Ընդեղէն մը :
11. Մարմնոյ մէկ անդամը :
12. Արհեստաւոր մը :
13. Թիւ մը :

Բառերը չարեւ այնպիսի կարգով մը որ նուիրական առարկայ մը ձեւանայ և զէրօններուն տեղ կարդացուի այնպիսի անուն մը որ այդ նուիրական առարկային վրայ մեռաւ :

ԹԻԻ 15

Հինգ տառերով եմ կազմուած ,
 Երկու վանկով ալ հնչուած ,
 Առաջինս է անունը դրին ,
 Որ համարօէք է վեց թիւին .
 Երկրորդըս է մի գիւղական
 Բազմամասնիկ նուագարան .
 Ամբողջութիւնս գտնէք պիտի
 Տօն մ'ամէնուն ալ հաճելի :
 Բ . Ա .

ԹԻԻ 16

Հայ դիւցազնի անուն մ'եմ ,
 Վանայ Լիճին մօտ դիւզ մ'եմ ,
 Երկու վանկէ բաղկանամ ,
 Վեց տառերով շատանամ :
 Առջի վանկըս ծաղիկ մ'է
 Հրպարտութեան յատկանիշ ,
 Իսկ վերջինս դերանուն մ'է ,
 Երրորդ գէմքի մատնանիշ :
 Աշխատողն անաչառ ,
 Պիտի գտնայ անպատճառ :
 ՅՈՎՍԷՓ Կ. ԱՊԱՋԱԵԱՆ

ԹԻԻ 17

Չեմ ծնած ես , չունիմ հայր , մայր ,
 Այր մ'եմ , նաեւ կոյսի մը մայր ,
 Հայրը՝ նաեւ նոյն այդ կուսին՝
 Զոր ինձ ըրի պատուական կին :
 Գրտիր արդաս , այս հանելուկ ,
 Ամէնն ըսի , ի՞նչ կայ ծածուկ :
 ԼԵՒՈՆ Խ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ

ԹԻԻ 18

Մայր մը ունիմ ծով , աշխարհի
 Բոլոր մարդիկ և թագաւորներ
 Կը սիրեն զիս , առանց ինձի իրեր
 համ չունին , բայց երբ մօրս գիր-
 կը իյնամ՝ կը մեռնիմ : Գրտիր ի՞նչ
 եմ :



ՆՈՐԱՅԱՍՆԵՐՈՒ ՊԱՏԿ. ՀԱՆԴԵՍ

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Խմբագիր

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒԾՏԵԱՆ

Տէր ԷԼ ՏՈՐԵՆԻ

Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ — ԹԻՒ 8

1 ԱՊՐԻԼ 1920

Զ Ա Տ Ի Կ

Փոքրիկ բարեկամներս,

Հաղիւ տասնեակ մը օրեր ետքը պիտի դայ նաեւ տօն մը, որ շատ սիրելի է ձեզի ամէնուղ։ Ահա այս տօնն է Զատիկական Տօնը, զոր ամէն տարի բոլոր քրիստոնեայ աշխարհը կը տօնէ մեծահանգէս՝ կրօնական արարողութիւններով։

Իսկ ամէնզ արդէն սորված ըլլալու էք ձեր կրօնքի դասին մէջ թէ ի՞նչ կը նշանակէ Զատիկական Տօնը կրօնապէս։ Իսկ քիչ ան հրէական հին Պատէքի տօնին յիշատակին մէկ շարունակութիւնն է, բայց բոլորովին Քրիստոնէական նոր նշանակութիւն մը առած։ Հիմա մեր քրիստոնէական հանկացողութեամբ Զատիկը Քրիստոսի Յարութեան տօնն է։ Քաղցր է ինծի յուսալ թէ՛ նորէն ձեր կրօնքի դասերուն մէջ ձեր ուսուցիչներէն սորված էք Յիսուսի ծնունդին, կեանքին, վարդապետութիւններուն ու մահուան մասին։ Բայց ամէնը այդ չէ։ Յիսուս մեռնելէ ետքը հրաշալի կերպով մը յարութիւն առաւ։ Ահա այդ մեծ դէպքին յիշատակն է որ ամէն տարի կը տօնուի Քրիստոնեայ եկեղեցիներու մէջ։

Զատիկը կը տօնուի արեւելեան հին ու արեւմտեան նոր բոլոր ազգերուն մէջ։ Այնպէս որ Կաղանդէն, Ծնունդէն ետքը ամէնէն կարեւոր մէկ մեծ տօնն է այս բոլոր քրիստոնեայ աշխարհին։ Բնական է որ ամէն

եկեղեցի իրեն յատուկ ծէսով կամ արարողութիւնով կը տօնէ այս Տօնը : Հայ եկեղեցին ալ իրեն յատուկ արարողութիւններով կը տօնէ զայն : Հայ եկեղեցիին Աւագ Շաբթուան բոլոր տօները, ինչպէս նաեւ Չատիկի Տօնը կրօնական շատ խորունկ յուզումներ ու բարեպաշտիկ զգացումներ յառաջ կը բերեն բոլոր հաւատացեալներուն սիրտերուն մէջ : Եկեղեցական ընթերցումներ, շարականներ, արարողութիւններ ամէնն ալ շատ սրտագրաւ են ու շինիչ :

Բայց կարծեմ պէտք չէ մոռնալ թէ Չատիկական տօնը իր կրօնական նշանակութենէն զատ ունի նաեւ ընտանեկան ու քիչ մըն ալ ազգային նշանակութիւն մը, որ անոր կրօնական բարձր իմաստէն աւելի կը խօսի ձեր մանկական ու պատանեկան սիրտերուն : Ռըչափ ուրախ պիտի ըլլաք ձեր ընտանեկան յարկերուն տակ : Չատիկ է . ես ալ միտքս կը բերեմ հին օրերու Չատիկները . երբ մենք ալ մեր նոր հագուստներով, Չատիկական նուէրներով ու նախշուն հաւկիթներով ուրախ եւ երջանիկ կ'ըլլայինք : Յետոյ կը յիշեմ նաեւ Չատիկին իբրեւ հայկական տօն հաճելի ժամանցները, պապենական սովորութիւնները, սրտաբուղիս բարեմաղթութիւնները և ուրիշ շատ մը բաներ, որոնք յատուկ էին գաւառական անկիւններու համար հայկական Չատիկներուն : Այո՛, թէեւ մեզ համար անցան այն հին բարի օրերու երջանիկ ու զուարթ Չատիկները, բայց այսօր ձեր տարիքին համար, սիրելի փոքրիկներ, նոյնն են հրապոյրներն ու հրճուանքները Չատիկական տօնին : Պէտք է ուրախ ըլլաք այս տօնին առթիւ, որովհետեւ ձեր Չատիկական հոգեւոր պարտականութիւնները կատարելով իրաւունք չահած կ'ըլլաք նաեւ զուարթ ու հաճելի Չատիկ մը տօնելու ձեր ընտանեկան յարկերուն տակ :

Սակայն, ինչպէս յաճախ կրկնած եմ ուրիշ մանկական տօներու առթիւ եւս, այս անգամ ալ պիտի յիշեցնեմ ձեր պարտականութիւնը ուրախացնելու համար ձեր հասակակից որբուկները, որոնք ընտանեկան յարկերէ հեռու իրենց որբանոցներուն մէջ կը տօնեն այս կրօնական ընտանեկան տօնը : Չանացէք կերպով մը զանոնք ալ մասնակից ընել ձեր ուրախութեան, նուէրով մը, այցելութեամբ մը, գոնէ համակրական կամ քաջալերական խօսքով մը կամ ժպիտով մը : Մի մոռնաք թէ անոնք ալ եկած են գաւառիկ անկիւններէ, ուր հայկական շէն ու բարիքներով լեցուն Չատիկներ կը տօնուէին այս վերջին ահաւոր աղէտներէն առաջ : Այո՛, ձերն է այս տօնը, զոր ձեր անտիրական հասակակիցներունն ալ ընել տալու պիտի ջանաք կը յուսամ :

Ուրեմն, այս յոյսով և ակնկալութիւնով է որ իբրեւ ձեր մէկ անկեղծ բարեկամը, կը կանխեմ ձեզ շնորհաւորելու Ս. Չատիկի Տօնը, մաղթելով որ հայկական հարազատ Չատիկներ տօնենք, մեր հայրենի երկրին ծոցը, յաւէտ ազատ, յաւէտ երջանիկ :

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԵՐ

Ի Ն Ծ Ի Հ Ա Մ Ա Ր

Ինձի համար չունին հրապոյր
Բուրասաններ եղեմաբոյր,
Ուր չեն ծաղկիր իմ հայրենի
Բոյլ ծաղիկներ բազմագունի:

Ինձի համար հրմայֆ չունին,
Քաղցր երգերը այն թռչունին,
Որ հայրենի յիշատակներ
Սրբիս մեջ չեն արթնցներ:

Ինձի համար չէ փափկաթել,
Զեփիւռին շունչն աղու, քեթել,
Որ հայրենի անսառնեռուն
Խորհուրդներով չէ քարաւուն:

Ինձի համար փայլ ու ժրպիս
Զունի լրնակն ականակիս,
Որ հայրենի սեզ սարերուն
Զի ցոլացներ տեսք սիրուն:

Ինձի համար անապաս են
Այն դաշտերը որ կ'անջատեն

Զիս դաշտերէն իմ հայրենի՝
Հայ մըշակն՝ ուր՝ խոնջ կը ֆրսնի:

Ինձի համար չունին լոյս, գոյն
Արշալոյսներ գեղեցկագոյն՝
Երբ հայրենի հորիզոնէն
Լոյս ժրպիսներ չի թրթռացներ:

Ինձի համար աստղեր գոհար
Տերեւներ են աշնանահար՝
Մեր երկինքն երբ չեն զարդարած,
Իրենց բոցով մեղմասարած:

Ինձի համար կեա՛նքն իսկ մահ է,
Եթէ սիրս իր մեջ չի պահէ
Մերն ու կարօս հայրենիքիս,
Զոր կը տենչա՛յ յաւեհ հոգիս:

Ինձի համար, ի՛մա հայրենիք,
Մեծ երազն ես գերերջանիկ.
Զիս արբեցուց սիրոյդ գինին,
Զոհ մըն եմ ես քո՛ւ բազինին:

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
(Կիլիկեցի)



Զ Ա Տ Ի Կ

Դաշտեր ծաղկեցան
Համակ խառնակի,
Սմբուլ ու շուշան
Կ'աւետեն Զաւիկ:

Թռչնիկներ սիրուն
Դուռներնու մօտիկ՝
Երգով նրոնողուն
Կ'աւետեն Զաւիկ:

Վարայ մարգերուն
Դառնակներ պզտիկ՝

Մայիւնով ցնծուն՝
Կ'աւետեն Զաւիկ:

Լեզուով հեշտ, թոքով՝
Մանկիկներ փոքրիկ
Զրարք երգելով
Կ'աւետեն Զաւիկ:

Շուտ թող գայ Օրհն այն՝
Երբ բոլոր մարդիկ
Պիտ' եղբայրանան
Ու տօնեն Զաւիկ...:

ԳՐ. Հ. Գ.

ԲՈՅՆԻՆ ՀՐԱՇԲԸ

Աստուած սորվեցուց թռչուններուն իրենց բոյները շինել ծառերու վրայ: Անգամ մը տղեկ մը կար, որ գեղեցիկ պարտէզի մը մէջ կը բնակէր պարտիզպանին հետ: Տղեկը շատ կը սիրէր պարտէզին անուշաբոյր ծաղկանոցներուն մէջէն անցնող նրբուշիկներէն քալել ու հսկայ ծառերուն շուքին տակ նստիլ:

Գարնան առտու մը տղեկը մեծ ուրախութիւն զգաց գտնելով բոյն մը, որուն մէջ երեք կապտորակ ձուիկներ կային: Տղեկը խնդրեց պարտիզպանէն որ այդ դիւար գաղտնի մնայ եւ իրենցմէ զատ ոչ մէկը իմանայ: Ամէն առտու կ'երթար ու տերեւները մէկդի ընելով կը դիտէր այդ սիրունիկ բոյնը մէջի գողտրիկ ձագուկներով:

Տղեկը օր մը հիւանդ ինկաւ ու մինչեւ որ աղէկցաւ բաւական օրեր անցան: Առաջին օրը որ պարտէզ իջաւ խաղալու համար, իր սիրական բոյնին քով փութաց: Պարտիզպանը տղեկին լացը լսելով անոր քովը փութաց: Իսկ տղեկը հեկեկալով ըսաւ. «Տեսէք, Պ. պարտիզպան, մէկը բոյնին մէջի ձուիկները գտած ու զանոնք կոտորած է:»

Պարտիզպանը տղեկը գուրգուրալից դրկելով ըսաւ անոր. «Մտի՛կ ըրէ, սա ծառին գաղաթէն ձայն մը կը լսե՞ս. թռչնիկներ են որ կ'երգեն. անոնք այլեւս բոյնին մէջը չեն: Պիտի փափաքէ՞ր որ թռչնիկները միշտ

բանտուած մնային իրենց այդ բոյնին մէջ. ա՛լ ատենը եկած է որ անոնք ծառերուն կատարները թռչտին: Աստուած զանոնք այդ սղտըտիկ տնակներէն ազատեց ու հիմա երջանիկ կ'ապրին արեւալոյսի այդ գեղեցիկ աշխարհին մէջ: Մտի՛կ ըրէ, կը լսե՞ս անոնց անուշ երգը: Անոնք փառք կուտան Աստուծոյ Զատկական այս ուրախ առտուան փառաւոր նոր կեանքին համար:»

Ի՞նչ պատահած էր այդ սիրուն բոյնին մէջ, փոքրի՛կ ընթերցողներս: Հոն կատարուած էր հրաշք մը. անկենդան ձուիկներէն սիրուն թռչնիկներ ելած էին: Ուրեմն, ձեր Զատկական հաւկիթներով երբ կ'ուրախանաք, միշտ յիշեցէք բոյնին հրաշքը: Աստուած կեանք պահած է այդ անկենդան հաւկիթներուն մէջնալ: Աստուած, կեանքի աղբիւրը, կեանքով լեցուցած է տիեզերքը համակ: Սորվեցէք անոր հրաշալի գործերը բնութեան մէջ եւ դուք ալ այդ նորաթուխս թռչնիկներուն նման փառքը երգեցէք Անոր սուրբ անուան:

ԳՐԻԶ-ՔՆԱՐ

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հայրիկը (տեսնելով ժամացոյցին կենալը). — Տարօրինակ բան, ինչո՞ւ կեցեր է ժամացոյցս:

Մայրիկը. — Թերեւս մաքրել տալ կ'ուզէ:

Տղան. — Չէ՛, մայրիկ, մաքրելու պէտք չկայ, ես ու քոյրս այս առտու աղէկ մը ջուրով ու օճառով լուացինք զայն:

ԳԻՏԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ՕՐՕՐՈՑԸ ԿԱՄ ՁՈՒՆ

Ը.

Մարդկային խորշը. — Մարդկային նախասաղմը հանգրուանէ հանգրուան. — Իբրեւ ստնաւոր ծնունդ. — Թէ խորշերը ինչպէս սնունդ կը ստանան կաթէն եւ միւս սննդեղէններէն. — Խորշերու բանթողը մահ կը նշանակէ. — Ճաշակելիքի խորշեր, դիւրամարս եւ դժուարամարս սնունդներ:

Մարդկային էակն ալ իր կեանքը կը սկսի իբրեւ միակ խորշ մը: Ան ալ կ'անցնի կենդանական կեանքի տարրեր հանգրուաններէն, որովհետեւ շատ հեռաւոր ազգականութիւն մը ունի այն պարզ արարածներուն, որոնք անհամեմատ կերպով մը գերազանցած է: Խռիկին բացուածքը ձրկնային ազգականութեան մը յուշարարն է. բայց ան կ'անցնի հանգրուաններէն և տեսակէտով մը տարօրինապէս ձուկի նախասաղմին նմանութիւնը կը կրէ: Բայց կեանքի հզօր ալիքը կը մղէ զայն արագաբար դէպի ստնաւորներու մակարդակը: Պահ մը զայն կը գտնենք շատ անգոհացուցիչ վիճակի մը մէջ, ոչ թռչուն, ոչ գազան. թէեւ իր չգարգացած սիրտով ու պտկող վերջաւորութիւններով՝ ուրիշ որ և է կենդանիէ աւելի թռչունի նմանող: Կը յառաջանայ դէպ ի ճշմարիտ քսանաւորներու ձեւը ու կ'անցնի հանգրուանէ մը, ուրկէ կ'անցնին բոլոր ստնաւորները: Հոս զայն կարելի չէ գանազանել խողի կամ շունի մը նախասաղմէն: Բայց ան

երկար ատեն չի մնար այս ստորին արարածներու նմանութեան հանգրուանին մէջ: Անոր խորշը դէպի մարդկային ուղղութիւն կը շարունակէ գործել, այնպէս որ՝ ան անձանաչելի շունի ձեւէն անձանաչելի կապիկի ձեւի մը նմանութիւնը կ'առնէ: Սակայն անոր խորշը բնաւ չի սխալիր ու զայն իբրեւ կապիկ չի վերջացներ, այլ կը շարունակէ գործը մինչեւ կատարելագործէ մարդկային արարածը:

Երբ անոր ձեւը բաւականաչափ աճի, մարդս կը ծնի, ինչպէս կը ծնին միւս ստնաւորները: Այս խորշերու գործին վախճանը չի նշանակեր. քաւ լիցի, անոնք միշտ կը գործեն: Անոր ծծած կաթէն իրենց բաժին կը հանեն. մասնի խորշերը՝ մասն, սակորինը՝ սակոր, իսկ ուղեղինը՝ ուղեղ կը շինեն անկէ: Յետոյ երբ հաստատուն սնունդ առնէ, անոր վրայ կը յարձակին և արիւնը իր սրնունդը կ'առնէ անկէ. սնունդ որ կը տարբազադրուի մարմինի մէջ գործող տեսակ մը խորշերու միջոցաւ: Այդ արիւնը կը հոսի ամէն տեղ ու անոր այս հոսումին ատեն խորշերը անկէ կ'առնեն իրենց պէտք ունեցածը շինելու համար նոր հիւսուածքներ մաշածներուն տեղ:

Մարմինը կախեալ է խորշերէն, քանի կ'ապրի: Երբ խորշերը բանթող ընեն՝ մարմինը արդէն մեռած է: Խորշերն ալ իրենց արտադրելիք գործին համար պէտք ունին սնունդի: Այդ սնունդը նախ կը հայթայթուի կաթի միջոցաւ ու յետոյ տարրեր սնունդներով —

բուսեղէն, մրգեղէն, ընդեղէն,
մսեղէն, որոնք խորշերու սնուն-
դի անդադրում պահանջը կը գո-
հացնեն: Բերանին ու քիթին ջղա-
յին բջիջները կը փորձեն այս
սնունդները ու կուտան անոր
վճիռը:

Այս ջղային խորշերը սնունդ-
ներուն մէկը միւսէն աւելի կրնան
սիրել. ճաշակելիքի խորշերը շա-
քարը, անուշահացը և համեմնե-
րէն ոմանք աւելի կը նախընտ-
րեն: Այսպիսի սնունդներ չափա-
ւոր կերպով դործածուելով ազէկ
են. բայց ազէտ փափկակերներ
ուրիշ դիւրամարս սնունդները
անտեսելով՝ ասոնք այնչափ շատ
կ'ուտեն որ ստամոքսի խորշերը
կը յոգնին, կը տկարանան ու ան-
մարսելի բաները չեն մասեր: Յա-
ճախ ընուծիւնը ապստամբող խոր-
շերու առթած ստամոքսի ցաւե-
րով կ'ազդարարէ իսկ, բայց ան-
խելք զոհը երբեմն կը շարունակէ
մեղանչել:

ՄԱՐԿՐԻԹ ՌԻՈՐՆԸՐ ՄՈՐԼԻ

Ա Ռ Ա Կ Ա Ն Ի

ԱՌԱԿ-ՔԱՌԵԱԿՆԵՐ



Բարձր սարեր
Շաւ հով կը գրկեն,
Մեծ արծիւներն ալ
Կը թռչին վերէն:



Բուսոս առտուան
Լուսոս ցերեկ,
Չախորդ այսօրուան
Վաղը՝ աղէկ:



Բանը օրուան մը,
Հոգը տարուան մը:
Չկայ գլուխ մ'անհոգ,
Շրթունք մ'անբողոք:



Բան դրբին փախաւ,
Հաց դրբին հասաւ.
Երբ ունիս խորհիկ՝
Մօտդ եմ մարդիկ:



Գլուխը ե խուփիկը,
Գրեք ե պրտուկը.
Իրար կ'արձեն շաւ անգամ
Երկու խենդ բարեկամ:



Գէտ օր՝ իմ տունըս,
Գէտ հարս՝ քու տունդ.
Գէտ հարսի՞ ինկար,
Կը փախչի քունդդ:



Գող՝ սիրք դող.
Չարն ե սիրտով
Յաւէ վրդով.
Տառապի թո՛ղ:



Գիրքս նստեք ե,
Մօռուք կը փեշէ,
Շատերու քրտն,
Է՛հ, այս չե՞ միթէ:



Գրնա մեռի
Եկուր սիրեմ.
Մի՛ վարանիր
Ըսածիս դեմ:



Գլորող քար
Հիմ չի բռներ.
Փոփոխամիտ
Է միշտ երեք:



Բերանը քաց,
Մեջը քաց,
Շաւ գործէ՝ բայց
Կեր կամաց.

ԽՈՍՏՄՆԱՊԱՅ ՀՈՒՄԱՅԵՑԻՆ



Րէկուլլոսի պատմութիւնը շատ ազէկ կը ցուցնէ թէ ի՞նչպէս հռովմայեցի մը կը միռնի ու խոստմնագրութ չըլլար: Րէկուլլոս, որ Կարկեղոնի դէմ պատերազմող հռովմէական բանակին հրամանատարն էր, գերի բռնուած էր: Հինգ երկար տարիներ ան արգելափակուած էր ու պատերազմը դեռ կը շարունակուէր:

Վերջապէս Կարկեղոնացիները պատերազմելէ ձանձրացան և Հռովմ բանազնացներ դրկեցին հաշտութեան համար և Րէկուլլոսն ալ բանազնացներու հետ իր հայրենիքը, Հռովմ դրկեցին: Բայց զայն չի զրկած՝ անկէ խոստում առին որ նորէն իր գերութեան պիտի վերադառնայ՝ եթէ Հռովմայեցիները չհաւանին հաշտութիւն կնքել:

Կարկեղոնի հրամանատարները զիտէին թէ Հռովմայեցիները Րէկուլլոսի նման իմաստուն մարդու մը թելադրութիւններուն ախտի անսային: Նաեւ կը խորհէին թէ ան պիտի թելադրէր իր հայրենակիցներուն վերջ տալ պատերազմին: Որովհետեւ եթէ Հռովմայեցիները հաշտութիւն կնքէին Րէկուլլոս ազատ պիտի ըլլար և ստիպուած չէր Կարկեղոն դառնալ ու կրնար իր ընտանիքին ու բարեկամներուն քով երթալ:

Եւ իրաւ ալ Րէկուլլոս իր երկար գերութեան պատճառաւ մարմնապէս տկարացած ու հիւանդ դուռ էր: Թշնամիները իրաւունք ունէին խորհելու թէ ան իր ա-

զատութիւնը պիտի փափաքէր: Բայց ան որչափ շատ կը սիրէր ազատութիւնը, նոյնչափ և աւելի կը սիրէր բան մը, — իր հայրենիքը: Եւ շատ ազէկ գիտէր թէ այդպիսի ժամանակ մը հաշտութիւն կնքելը օգտակար չպիտի ըլլար Հռովմայեցիներու համար՝ երբ Կարկեղոնացիները այնչափ յոգնած էին կռուելէ և փափաքող էին խաղաղութեան:

Ան որոշած էր լսել իր հայրենակիցներուն թէ մտիկ չընեն այն բանազնացներու խօսքերուն: Այնպէս որ երբ Հռովմի դուռները հասան Րէկուլլոս ներս, քաղաք չի մտաւ, այլ լուր դրկեց ծերակոյտին որ դուրս գան իր բերած լուրը լսելու համար:

Երբ Հռովմի այդ առաջնորդները քաղաքէն դուրս եկան զայն տեսնելու համար, Րէկուլլոս ըսաւ անոնց թէ իրենց թշնամիները պատերազմելէ յոգնած էին և կը փափաքէին անոր վերջ տալ: Բայց ան խնդրեց իր հռովմայեցի հայրենակիցներէն որ մտիկ չընեն բանազնացներու խօսքերուն:

«Բարեկամներս, ըսաւ ան, թշնամին շատ յոգնած է, աւելի չի կրնար կռուիլ. կ'ազաչեմ ձեզ, որ լսէք իմ թելադրութիւններուն և մերժէք հաշտութեան այս առաջարկը:

«Բայց, Րէկուլլոս, ի՞նչ պիտի ըլլայ քու վիճակդ, հարցուց ծերակոյտը:

«Իմ մասին մի խորհիք, պատասխանեց քաջ զինուորականը, ես խոստացած եմ ետ, գերութեան դառնալ երբ չյաջողիմ հաշտութիւն կնքել և ես երբեք չեմ

Քրիստոսը խոստովանազանաց ըլլալ : Բայց
եւ ծեր մարդ մըն եմ, և կարե-
ւորութիւն չունի թէ ի՞նչ պիտի
ըլլայ ինծի: Խնդրեմ, ըրէ՛ք այն
որ ամենաօգտակարն է Հռովմի
համար, մերժեցէ՛ք հաշտութիւն
կնքել :»

Հռովմայեցիները շատ տխրե-
ցան իրենց քաջ հրամանատարը
եւ կարկեղոն զրկելու մասին
խորհելով, բայց Բէկուլլոս հա-
տատ էր իր սրտումին վրայ, ան
մինչեւ իսկ չուզեց տեսնել իր
կինը և զաւակները, վախճալով
թէ անոնց արցունքները կրնային
զինքը խախտել իր հաստատա-
մանութենէն :

Այսպէս ծերակոյտը վերջապէս
համոզուեցաւ Բէկուլլոսի խօսքե-
րուն և եկող բանազնացներուն
յայտնեց թէ պատերազմը պիտի
շարունակուի մինչեւ որ կործանի
կարկեղոնը :

Բէկուլլոս իր խոստումը յար-
գեց և իր թշնամիներուն վերա-
դարձաւ, անոնց տանելով այս
պատասխանը : Կարկեղոնացիները
սաստիկ զայրացան երբ իմացան
թէ ան իր հայրենակիցները հաշ-
տութիւն կնքելու համոզել իսկ
չէր փորձած, մեռցուցին այս քաջ
ծերունի զօրականը խիստ անա-
գորոյն մահով մը :

Բէկուլլոս կեանքը կորսնցուց,
բայց իր խոստումը պահեց :

Ահա ճշմարիտ հայրենասիրու-
թեան օրինակ մը, ահա խոստ-
մանապահութեան գովելի գործ
մը : Դեռատի ընթերցողներս, մի
մոռնա՛ք թէ յաճախ կեանքէ ա-
ւելի բարձր դասելու գերագոյն
չափեր, ազնիւ նպատակներ կան,

որոնց համար կ'արժէ զոհողու-
թիւն ընել : Հայրենասիրութիւնը
մէկն է այդ բարձր գաղափարա-
կաններէն : Նոյն ատեն պէտք չէ
մոռնալ թէ ուղղամիտ ու արժա-
նապատուութեան տէր անձ մը
միշտ կը յարգէ իր խոստումը :
Շուտ ու շատ մի խոստանա՞ք,
բայց երբ խոստանա՞ք՝ յարգեցէ՛ք
ձեր խոստումը, այդպէս կը պա-
հանջէ ազնիւ արժանապատուու-
թիւնը : Սորվեցէ՛ք բարձր նպա-
տակներու համար զոհողութիւն-
ներ ընել : Ժշմարիտ մեծութեան
տանող ճամբան է այդ, որ շա-
տերուն շատ մը զոհողութիւններ
պարտադրած է, բայց նոյն ատեն
ազնիւ ու մեծ հոգիներու համար
չէ դադրած հրապուրիչ ըլլալէ :
Կարդացէ՛ք մեծ հայրենասէրներու,
մարդկութեան բարձրագոյն բա-
րիքին նուիրուած անձերու կեան-
քին պատմութիւնները և պիտի
համոզուի՞ք ըսածիս : Չի բաւեր
ազնիւ ու անձնուէր գործերը
լսել, կարդալ և մինչեւ իսկ հիա-
ցումով գովել զանոնք, այլ
պէտք է հետեւիլ անոնց և ընել
զանոնք մեր կեանքին օրինակ ու
գաղափարական :

Դեռատի բարեկամներս, եթէ
Բէկուլլոսի անձնուիրութեան այս
հին պատմութիւնը այս օգտակար
դասը աղէկ մը կրցաւ տպաւորել
ձեր միտքերուն վրայ, վստահ ե-
ղէ՛ք թէ ձեր կեանքին համար
շատ կարեւոր ու օգտակար դաս
մըն ալ սորված եղա՛ք :

ԳՐ. Հ. Գ.

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐԸ

Ա.

Ճամբորդ մը Ափրիկէի կեդրոնական ընդարձակ անապատներուն մէջ մուրերէր էր։ Ամբողջ երկու օր ո՛չ ուտելիք դտաւ և ոչ ալ խմելիք, ու ծարաւէն եւ անօթութենէն կը մեռնէր։ Վերջապէս ծառի մը քով հասաւ, որուն ներքեւէն պաղ ջուր մը կը հոսէր։ Ծառին վրայ պտուղ չի կար, բայց աղբիւրին քով փոքրիկ պարկ մը կար։

«Փա՛նք Աստուծոյ, ըսաւ ճամբորդը, դուցէ ասոնք սխեռներ են, որով պիտի կարենամ անօթութիւնս անցնել։»

Անմիջապէս պարկը բացաւ, և մէջիները տեսնելով՝ գոչեց.

«Ա՛հ, Աստուած իմ, մարդարիտ են եղեր։»

Բ.

Խեղճ ճամբորդն անօթութենէ պիտի մեռնէր այս մարդարիտներուն քով՝ որոնք շատ դրամ կ'արժէին։ Բայց սկսաւ եռանդով աղօթել Աստուծոյ։ Նոյն պահուն տեսաւ որ Մաւրիտանացի մը ուղտի մը վրայ հեծած, արագութեամբ կը վազէր։

Մարդարիտի ծրարը ան մոռցեր էր հոն, աղբիւրէն ջուր խմած ատեն։ Ուստի շատ խնդաց դայն գանելուն։ Գլխաց անօթի ճամբորդէին, անոր հաց և պտուղ տուաւ ու հետն ուղտին վրայ առաւ։

«Նայէ՛, ըսաւ Մաւրիտանացին, Աստուծոյ ճամբաներն ի՛նչ զարմանալի են։ Ես իմ մարդարիտներուն կորուստը մեծ գրեթէ քաղցութիւն մը կը համարէի։ Բայց քեզի համար մեծ բարեբաղցութիւն մը եղաւ, որովհետեւ Աստուած այսպէս ուղեց, որպէս զի ստիպուիմ ետ դառնալ և քու կեանքդ փրկել։»

Բայց քեզի համար մեծ բարեբաղցութիւն մը եղաւ, որովհետեւ Աստուած այսպէս ուղեց, որպէս զի ստիպուիմ ետ դառնալ և քու կեանքդ փրկել։

ԶԱՏԿԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

(Մանկական Արտասանութիւն)

Թո՛ղ շընորհաւոր
Ըլլայ մեր Զատիկ,
Վիշտերէ բոլոր
Այլեւս ազատիք։

Սուրբ Յարութեան Տօն
Բերէ մեզ բարիք,
Ու բիւր տեսակ ձօն,
Շա՛տ օրեր ապրիք։

Ա՛յ խաղաղութեան
Թո՛ղ գայ նոր շրջան,
Եւ աշխարհ համայն
Փա՛նք այլ Յարութեան։

Թող շընորհաւոր
Ըլլայ մեր Զատիկ,
Այս՝ հայ Զատիկ նո՛ր,
Օ՛ր բարեբաւտիկ։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Ծոյլ աղայ մը ամէն առտու սովորութիւն ըրած էր անկողնէն ուշ ելլելը։ Հայրը զինքը խրատելու համար. «Մարդ մը առաւօտուն կանուխ քսակ մը ոսկի գտեր է, ըսաւ, ճամբուն վրայ կը տեսնե՞ս կանուխ ելլելուն օգուտը։ Տղան՝ «Ըսել է թէ, ըսաւ, այդ ստակը կորսնցնողը աւելի կանուխ ելեր է. ուրեմն տեսէք թէ կանուխ ելլելը ի՛նչ փառանք ունի։»

ԶԱՐՀՈՒՐԱՆՔԸ ԿԱՐՆՈՅ ՄԷՋ

Գրեց՝ ժ02Է Ր. Լ.

Թարգմանեց Ն. ՅՈՎՍԷՓ ՏԵՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ
Վիեննական Մխիթարեան

Այսու հանգերձ հիւրընկալները զիրենք կը կողոպտէին . . . : Այսպէսով գիշեր ատեն սպասաւորները կը գողնային ձիերուն այն վարսակը, գորս իրենց տէրերը նախորդ օրն իսկ ձախած էին այս ճամբորդներուն :

Չորս ժանտարմաներուն հրացանը և այն գոր Չանարեան էֆ. պահակէն խլած էր փախուստի իրիկունը, գլխաւոր պատճառներն էին իրենց ընծայուած յարգանքին :

Իրիկուն մը սակայն ստիպուեցան իջեւանիլ մեծ գիւղի մը մէջ, որուն պետը իրեն արհեստ ըրած էր աւազակութիւնը : Իր գիւղին մարդիկներուն գլուխն անցած ուրիշ գիւղացիներու գէմ պատերազմի կ'երթար : Յաճախ արիւնալի ընդհարումներ կը պատահէին, որով ամենալաւ ընտանիքներու պետերը սպաննուած էին և յաղթականները գիւղ կը վերադառնային գերի կիներու և տղոց կարաւաններով, այծերու, գոմէշներու և ոչխարներու հօտերով ու արմտիք բեռցած կառքերով :

Ճամբորդները այդ գիւղին մէջ գէշ հիւրընկալուեցան : Թէև հրաւիրուեցան պետին ճաշին մասնակցելու, սակայն հսկողութեան ներքեւ ըլլալով չատ անհանգիստ եղան : Միշտ կասկածելի և ոտից

ցղլուխ զինուած անձեր, իրենց նայելով դադտնի խորհրդակցութիւններ կ'ընէին մէջերնին :

Անոնց հրամցուցին պուլլուրէ բիլաւ մը խառնուած մսի հաղուեցալու կտորներով : Ճամբորդները հաղիւ թէ կրցան նշմարել այդ մսի կտորները : Հաղիւ հրամցուած այդ մսի կտորները, անհետացան գիւղապետին և իր արանեակներուն բերնին մէջ, որոնք կարծես ուրիշ հոգ չունէին, բայց եթէ միայն կարելի եղածին չափ քիչ ուտելիք թողուլ հրաւիրեալներուն :

Սրտքը չալուչ վարանոտ գէմք մը ունէր, նախ քան իր հիւրընկալներէն հրաժեշտ առնելը անոնց իմաց տուաւ որ ճամբորդները պիտի մեկնին երկրորդ առտուն գէպի կարին :

Բայց կէս գիշերին Սրտքը չալուչ արթնցաւ, Պարոյրը և անոր հայրը արթնցուց, և անոնք ամէնքը մէկանց սողոսկեցան անձայն տունէն դուրս, ու ցատկեցին ձիերուն վրայ և լերան մէջէն սկսան յառաջանալ : Բայց անոնք չուրն անդամ կը հետադօտէին ամենափոքր աղմուկէն կը դողային, ձեռքերնին միշտ հրացանի բռնին վրայ դրած : Այսպէս կրցան խուսափիլ դժբախտ արկածէ մը :

Թ .

Անոնք քաղեցին ամիսէ մը աւելի : Ապրեցան ինչպէս որ կըրցան , ձիավարելով ամբողջ օր մը , իբր մնունդ դաւաթ մը թէյ միայն առնելով :

Երբ հասան լճի մը եզերքը , Ռուսերը և Թուրքերը իրարու ձեռքէ խլել կ'ուզէին թէն ըսուած փոքրիկ գիւղը Թօրթուս կէօլ ըսուած ջրվճիին մօտ : Թշնամի շարքերուն մէջէն անցնիլ շատ դժուարին էր . . . : Սըտքը չավուշ կանչեց մէկ կողմ Զանարեանը և անոր ըսաւ խորհրդաւոր կերպով մը .

— Ի՞նչ պիտի ընես , Զանարեան էֆէնտի :

Հայր միայ մտածկոտ :

— Ինչպէ՞ս պիտի անցնիս . . . պիտի կարենա՞ն ուստական շարքերուն միանալ . . . :

— Ի՞նչ ըսել կ'ուզես , Սըտքը չավուշ :

— Ինծի հետ դուն առանձինն եղիր և ես զքեզ պիտի առաջնորդեմ գէպի թէն գիւղը , գէպի ուստական գիծերը . . . : Պաթուս պիտի երթաս քու ղինավաճառ եղբօրդ քովը և պիտի վերադառնաս ամիսէ մը . . . :

— Սըտքը չավուշ , միտքդ փոխած ես :

— Կը կարծե՞ս , ես որ զքեզ առաջնորդեցի մինչեւ հոս , որպէսզի գլխուս խա՞ղ խաղաս ու ելլես երթաս բարեկամիդ քով առանց խոստումդ կատարելու :

— Ի՞նչպէս կ'ուզես որ քեզ վստահացնեմ թէ՛ ամիսէ մը պիտի վերադառնամ :

Տասնապետը քրքիջով ձը խընդաց և ըսաւ .

— Պիտի վերադառնաս , Զանարեան էֆէնտի , որդիդ առնելու համար , զոր տարակոյս չկայ թէ պիտի պահենք մինչեւ քու վերադարձդ :

Զանարեան էֆ . աղաչեց , պաղատեց և սպառնաց , բայց օգուտ չըրաւ . խորամանկ ընկերը անողորբելի էր : Զանարեան տրտում , տխուր և թախծալից համբուրեց Պարոյրը , որ նեղուած չէր երեւար իր նոր ընկերներուն բաղդակից ըլլալուն :

Սըտքի հետիոտն առաջնորդեց վաճառականը կիրճերուն և ժայռերուն մէջէն և ձիւնապատ լեռանց գագաթներէն , բերաւ կայանի մը մօտ ուր փաղափները իրենց թէյը կը պատրաստէին :

— Տեսնու թիւն , Զանարեան էֆէնտի , ջանա որ այդ գրացիներուն քովը երթաս . . . :

Ժ .

Պարոյր և չորս ոստիկաններ սկսան վերստին քաղել գիւղին մէջէն : Փոքրիկ տղան անձանաչելի էր : Ան աղտոտ , սպտառատուն , նիհար և չոր , ծառի ճիւղի մը նման կը վազէր նստած իր փոքրիկ ձիուն վրայ , զոր քիւրտերը գողցած էին իրեն համար անհրաժեշտ գիւղէն :

Նա մեծ ճարպիկութեամբ կը գործածէր այն հրացանը , զոր իր հայրը իրեն թողած էր : Քիւրտերը ղինքը որսի կը տանէին , և որովհետեւ ձմեռ էր , գայլերը իրենց բոյներէն ելած կը շրջագայէին լեռանց կողքին վրայ : Հինդ ձիաւորներն այս անօթի գայլերուն դէմ կ'ուռելու առիթն ունեցան :

(Շար.)

EIGHT ENGLISH LESSON

Pronouns

I	— այ	=	Ես	His	— հիւզ	=	իրենք
Thou	— տհառ	=	դու	Our	— ար	=	մեր
He	— հի	=	ան (ար.)	Your	— եր	=	ձեր
She	— շի	=	» (իդ.)	Yours	— երդ	=	ձերդ
It	— իթ	=	» (չէդ.)	Their	— տհէթ	=	անոնք
We	— աւի	=	մենք	Who	— հու	=	ով, որ
You	— եու	=	դուք	Which	— հուիչ	=	որը, որ
They	— թհէյ	=	անոնք	What	— հուաթ	=	ինչ
Me	— մի	=	իմ	This	— տհիս	=	այս
Mine	— մայն	=	իմս	These	— տհիզ	=	այսք
Thine	— տայն	=	քուդ	That	— տհէթ	=	այն
Him	— հիմ	=	դայն	Those	— տհօզ	=	այնք
Her	— հըր	=	» (իդ.)				

EXERCISE

I am a good boy. You are a happy girl. We are glad children. That book is mine, but this pen is yours. They have some paper. Have we a short or a long lesson? I have these and you have those. Here is a

letter for him. There are books for her. Our blackboard is large but yours is small. Their teacher is a good man and our brother is a content pupil. She is my sister. He is your brother. It is a useful book.

BIRDS

Up, up in the sky,
The little birds fly.
Down, down in the nest,
The little birds rest.

With a wing on the left,
And a wing on the right,
The dear little birds
Sleep all the long night.



Թիւ 10 բառեղծուածին լուծումն է
 Ե ր Ա ս իս
 Գ ա Ռ ն ի
 Ա ճ Ա ա
 Ս ե Ի ա ն
 Կ է Օ թ է
 Ա ռ Տ է ր

եւ ձեր սիրելի բարեկամն է, «Առաւօտ»
 ձեր սիրական թերթը:

Թիւ 11 բառեղծուածին լուծումն է
 ՊԱՐԱՊ

ԾԱՆՕԹ.— Դիտել կուտանք թէ վրի-
 պակով մը «երկավանկ» շարուելու տեղ
 «եռավանկ» շարուած էր այս բառեղ-
 ծուածին առաջին տողին մէջ, ու կը
 կարծենք թէ այդ արգելք եղաւ որ շա-
 տեր յաջողին լուծել զայն:

Թիւ 12 հանելուկին լուծումն է
 Ա ն ն Ա
 Պ ա ր ա Պ
 Տ ա ր ա Տ
 Ա :: Ա
 Կ ա տ ա Կ

Երկու կողմերէն կը կարդացուի ԱՊՏԱԿ

Թիւ 13 հանելուկին լուծումն է
 ԱՆՆԱ

ԼՈՒԾԵՅԻՆ

Ռօպէրթ Գօլէճէն, Բումէլի Հիսար.—
 Ալպէրթ Գալաֆեան, թիւ 10, 12 եւ 13
 բառեղծուածները եւ թուաբանական
 խնդիրը, Բիւզանդ Ճէրահեան՝ 12, 13 եւ
 թուաբանականը, Գրիգոր Գարապաճեան՝
 10, 11, 12, 13 եւ թուաբանականը, Յա-
 րութիւն Էքմէքճեան՝ 13 եւ թուաբանա-
 կանը:

Ս. Սանդխտեան վարժարանէն, Բու-
 մէլի Հիսար.— Մերուժան Սարիմեան,
 Նեկտար Ժամկոչեան, Նուարդ Ալիքսան-
 եան, Էկկանթին Յարութիւնեան, թիւ 12
 բառեղծուածը:

Ս. Մեսրոպեան վարժարանէն, Կէ-
 տիկ Փաշա.— Նուպար Հոթօնեան, թիւ
 13 բառեղծուածը, Մկրտիչ Եօթնեղբայր-
 եան, Նշան Նշանեան, Իւղաբեր Պաս-
 մաճեան, Տիրուհի Ապագաեան, Զապէլ
 Կիւլիստանեան, Նուարդ Պիւլպիլեան,
 Ստեփան Նաւարեան 13ը, Գրիգոր Քէ-
 սէեան, Սահակ Գրիգորեան, Գէորգ Պէր-
 պէրեան, Եսայի Տիրատուրեան, Զգօն

Նազարէթեան, Ժիրայր Սիմօնեան 11ը,
 Նուպար Սամուէլեան, Գեղամ Սեթեան
 11 եւ 12ը, Օննիկ Բալուեան 11 եւ 13ը,
 Հայկ Խրիսթիանեան, Սիրարփի Կիւմիւշ-
 կէրտանեան, Մելինէ Նահապետեան 13ը,
 Նուպար Մենենտեան 11, 12 եւ 13ը:

Մայր վարժարանէն, Գում Գաբու.—
 Բերրոնէ Պէսիմեան, թիւ 13 բառեղ-
 ծուածը եւ թուաբանականը, Արուստակ
 եւ Անժէլ Քէշիշեան 13ը:

Թորոսեան վարժարանէն, Գատրգիւղ
 Մօտա.— Նշան Գրիգորեան, թիւ 10 եւ
 13 բառեղծուածները, Շաքէ Թորոսեան
 եւ Յարութիւն Թաքըճեան 13ը, Շաքէ
 Իւթիւճեան, Վարդանոյշ Իւթիւճեան
 թուաբանականը:

Ամերիկեան վարժարան, Կէտիկ
 Փաշա.— Արշակ Տիմիճեան, թիւ 13 բա-
 ռեղծուածը եւ թուաբանական խնդիրը,
 Անահիտ Նազարէթեան, Միհրան Պէգ-
 ճեան, թիւ 11, 12 եւ 13 բառեղծուած-
 ները:

Պէրպէրեան վարժարանէն, Սկիւ-
 տար.— Աղեքսանդր Քիրէճճեան, թիւ
 13 բառեղծուածը:

Պէզազեան վարժարանէն, Մազրի
 գիւղ.— Միհրան Պճիկեան, Յովհաննէս
 Մինթանճեան, 10 եւ 13 բառեղծուած-
 ները եւ թուաբանական խնդիրը:

Նօթր Ծամ տը Սիօն վարժարանէն,
 Գատր գիւղ, Մօտա.— Անգիլէ Գալաֆ-
 եան, թուաբանական խնդիրը:

Լուծեցին նաեւ Աւետիս Աւագեան,
 թիւ 10 եւ 13 բառեղծուածները, Զա-
 րեհ Կիւմիւշեան (Սկիւտար) 10, 12, 13ը
 եւ թուաբանականը, Պ. Զարոյեան (Ճի-
 պալի) 10, 12 եւ 13ը, Յ. Ճըռճըռեան
 (Սկիւտար) 10, 12 եւ 13ը եւ թուաբա-
 նականը, Միլթօն Ա. Մէլիքեան (Գան-
 տիլի) թիւ 13ը:

Թիւ 10, 11, 12, 13 բառեղծուած-
 ները եւ թուաբանական խնդիրը լուծող-
 ներէն վիճակով առաջնութիւն շահեցաւ
 Հայկ Խրիսթիանեան: որուն կը նուիրենք
 վեցամսեայ «Առաւօտ»:

Թիւ 9 հանելուկը լուծեցին նաեւ
 Պէրպէրեան վարժարանէն (Սկիւտար)
 Պետրոս Յ. Թէլլալեան, Պօղոս Օ. Մե-
 լիքեան, Մեսրոպ Կ. Թաշճեան, Միհ-
 րան Գ. Պարսամեան, Մայր վարժարա-
 նէն (Գում Գաբու), Վեհանոյշ Սինան-
 եան, Աստղիկ Եէմէնիճեան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



**ՊՈԼԻՍ
ԵՒ ԳՎԻԱՌ**

Տարեկան (24 թիւ) 60 Դան.

Վեցամսեայ (12 ») 30 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան (24 ») 10 Գրանի

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.—Առաւօտի հասցէն է Պապը Ալի
հաստէսի, թիւ 43, Բ. Դրան ճիշդ դիմացը:

ԾՆՈՂՔ ՄԻ ՔԱՇԵԼ ՏԱՐ

Ծնողքնե՛ր պէտք չէ քաշել տար
ներ փոքրիկներուն ակռաները, այդ կեր-
պով կգակի ձեւափոխութիւն յառաջ
կուգայ. Դիմեցէք Ատամնարոյժ

ՏՈՔԹ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ

որ արտասահմանի մէջ երկար ժամա-
նակ, մասնաւորապէս զբաղած է նաեւ
տղոց կաթի ակռաներու դարմանումի
ուսումնասիրութեամբ եւ ատով մասնա-
գիտութիւն ձեռք բերած:

Հասցէ՝ Պոլիս, Էմին Էօնիւ, Եէնի ճամի
սանդուխներուն դէմ, Թիւ 61.

**ՀՈՎԱՆՈՅԱՆ
ՎԱՃԱՌ**

**ԵՐՈՒԱՆԴ
ԷՏԻԿԱՐԵԱՆ**

Կը պատրաստէ
եւ կը նորոգէ,
ասէն տեսակ
հովանոցներ:
Կը ծախէ նաեւ
ընտիր եւ գե-



ղեցիկ գաւազաններ: Հասցէ՝ Եէնի ճամի,
Զիլնկիրլէր, թիւ 64.

Ամեն Հայ պէտք է ունենայ
**ՄԻՈՂՋՍԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՔԱՐՏԷՍԸ**

Գունաւոր, մեծադիր, մանրամասն
Գին 30 ՂրՇ.

Դիմել Պապը Ալի հաստէսի, Ատա-
տուրեան տպարան, Յ. Դարբինեանի

ԱԶՔԸ ԼՈՅՍ

Իրենց առողջութեան
նախանձախնդիր անձերուն

**ՏՔԹ. ՄԱՐՏԻԿ Յ. ՐԷԻՍԵԱՆ
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ**

Ի դիւրութիւն իր յարգոյ յանախորդնե-
րուն եւ համակիրներուն փոխադրուած է
Պոլիս, Նոր Նամակատան դէմ, Վլօրա
խան, թիւ 18, ուր գիտական ամենա-
վերջին նորութեամբ կը դարմանէ բերնի
եւ ակռաներու հիւանդութիւններ: Կը
շինէ երաշխաւորեալ տոկունութեամբ եւ
նրբանշակ ատամնաշարեր, գուրօններ,
պոլիսներ եւ բիւփօններ:

ԿԱՏԱՐԵԱԼ ՃՇԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ
ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԿՈՊԵՌՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1900 ԻՆ

Կեդրոն Պահնէ Դաբու: Մէյվախօճ Խան—Հեռաձայն Սքամպուլ 319

Ծովային գործակալութիւն, ներկայացուցչութիւն, ներածում, արտածում, բեռնա-
ւորում, մաքսային գործառնութիւն, յանձնակատարութիւն, պարպում եւ փոխադ-
րութիւն: Մաքսային գործառնութեանց ճիւղը ապրանքին Պոլիս ժամանումէն 48
ժամ վերջ մաքսի գործողութիւնները կը լրացնէ: Փոխադրութեան ճիւղը ամէն օր
ապրանք կ'ընդունի Սեւ Ծովի եւ Միջերկրականի օամ. եւ օտար նաւահանգիստ-
ներուն համար: